պէտք է գնուէր, թէ ինչ գիրք են կարդում հեստեալներն և եթէ ոչինչ չ'երեւէր, պէտք է խոստովանահարց ձեռքով խրատուէր, որ իրանց տներում կարդան նոքա «Բարի մարդ և Բարի Քրիստոնեայ» անուն գիրքը։ Այս խրատն և ցոյց տուած միջոցն ի հարկէ ոչինչ հետեւանք չունեցան . . . ։

84. Վերջապէս եկաւ թեմի կառավարիչ Գէորգ եպիսկոպոս Մ'կրտչեանի ցանկացած հրամանը։

1861 թուին ապրիլի 25ին Վեհ. կաթուղիկոսն Մատթէոս Ա. կոնդակ արձակեց յանուն սրբազանի առ այն, թէ՝ ցաւօք սրտի լսած է ինքն, որ Շամախւոյ բնակիչներից ոմանք մոռանալով Հայաստանեայց եկեղեցւոյ և Առաքելական Հայրապետական սահմանադրութիւնները, ծէսերն ու կանոնները, անգէտ լինելով, որ մեր աշխարհից հեթանոսութեան և անաստուածութեան խաւարը փարատեցաւ սրբոյն Գրիգորի արգասաւոր քրտամբք և բազմաչարչար նահատակութեամբ և ոչ Լիւթերի քարոզութեամբ, մոռանալով և չգիտենալով այս ամենը, նոքա «հեստեալք ի ծածուկ իբր ի գիշերի խաւարաւ անգիտութեան և անհարազատ կամապաշտութեան պաշարեալ զհոգի առ խարխաբ դանդաչեն ի մոլորամիտ և ի գայթակղեցուցիչ վարդապետութիւնս ի գոգի ամբարշտութեան և կամակորութեան պաշարեալ Լուտերի և ամենայն նորա աղանդից մոլորեցուցչաց ։ . . Նոքա այժմ արտաքին երեւութին միայն ցանկան և հնարեն խոստովանել տալ զինքեանս գոլ որդիք հարազատ Հայաստանեայցս սուրբ և ուղղափառ եկեղեցւոյ, ուստի և ի ցոյց մարդկան իբրեւ հարազատ ժառանգք Լուսաւորչի յաճախեն լսեմք յեկեղեցի մեր ոչինչ խորութիւնս և որոշողութիւնս առնելով ի սրբազան ծէսս և յարարողութիւնս նորա»—որով՝ ասած է՝ յետոյ չեն կարող յոյս ունենալ մեղաց թողութեան և հոգւոյ փրկութեան մանաւանդ թէ պիտի դատապարտին, վասն զի ծածուկ հեստեւում են մոլար վարդապետութեան և ուզում են խափել սրտագէտ Աստուծոյն։

Եւ այս է եզրակացական վճիռն կոնդակին՝ «Պատուիրեմք ձեզ հարկադրել զամենայն քահանայս ձերում քաղաքի, զի զառաջի աչաց ունելով զգուշարար հրաման սրբոյ Աւետարանի Տեառն մե-